«ԳԼՈԲԱԼ ՍՈՒՐՎԵՅ»
ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ ՍՊԸ
Ք.Երևան, Մ.Խորենացու, 201 հեռ 096960769,096960469,096966979,էլ.հասցե globalsurvey@mail.ru

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 256-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան «ԳԼՈԲԱԼ ՍՈՒՐՎԵՅ» ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ ՍՊԸ մասնագիտացված փորձագիտական հաստատության փորձագետ Ա.Լ.Ստեփանյանս ծանոթացվել եմ նույն օրենսգրքով սահմանված փորձագետի իրավունքներին ու պարտականություններին, այդ թվում հիմնավոր և անաչառ եզրակացություն տալու փորձագետի պարտավորության մասին:

Փորձագետ՝ Ա.Լ.Ստեփանյան

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թիվ՝ ՀԱ 1225-047
Ըստ՝ Թիվ [redacted] կատարողական վարույթի
Փորձաքննության տեսակը՝ Ապրանքագիտական փորձաքննություն:
Փորձաքննության հիմքը՝ ՀԿԱԾ Արմավիրի մարզային բաժին, [redacted]
29.12.2025թ. որոշումը փորձագետ նշանակելու մասին:
Հետազոտությունը սկսվել է՝ 08.04.2026թ.
Հետազոտությունն ավարտվել է՝ 01.07.2026թ.
Փորձագետի եզրակացությունը շարադրված է՝ «07» յոթ թերթից, կից համակարգչային լուսանկարչական հավելվածը «01» մեկ թերթից՝ ընդհամենը «03» երեք լուսանկարներով:
Տեղեկություններ փորձաքննությունը կատարող փորձագետների մասին՝

ՓՈՐՁԱԳԵՏ՝ ***Արայիկ Լյուդվիկի Ստեփանյան*** – ԳԼՈԲԱԼ ՍՈՒՐՎԵՅ» ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ ՍՊԸ մասնագիտացված փորձագիտական հաստատության ապրանքագետ-փորձագետ, դատական փորձաքննության մագիստրոսի ակադեմիական աստիճանով, դատական փորձաքննություն մասնագիտությամբ (Դիպլոմ թիվ ԱՄ №100982), բարձրագույն տնտեսագիտական կրթությամբ՝ ձեռնարկությունների էկոնոմիկա և կառավարում մասնագիտությամբ, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի կողմից տրված 16-01՝ (Արդյունաբերական (ոչ պարենային) ապրանքների, արդյունաբերության տարբեր ճյուղերի, օբյեկտների և արտադրանքի՝ շինարդյունաբերական՝ շինարարական կառույցների, հանքարդյունաբերական՝ հանքերի, գյուղարդյունաբերության օբյեկտների, կապակցված տարածքների և այլ հողատարածքների հետազոտություն, այդ թվում՝ որակային հատկանիշների և արժեքային ցուցանիշների որոշման նպատակով) և 16-02՝ (Տրանսպորտային միջոցների՝ այդ թվում օդային, ջրային, գծային և այլն, ցանկացած տեսակի ավտոմեքենաների և ավտոմոբիլների, սարք-սարքավորումների, մեքենա-մեխանիզմների հետազոտություն, այդ թվում արժեքային, որակային և վնասի չափի ցուցանիշների որոշման նպատակով) ենթատեսակների դատաապրանքագիտական փորձաքննություններ կատարելու իրավասությամբ՝ որակավորման վկայականներ № 211, №298 և ՀՀ արդարադատության նախարարության դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի կողմից տրված շինարարատեխնիկական փորձաքննություններ կատարելու իրավասությամբ, անշարժ գույքի գնահատման հետազոտություն, ապրանքագիտական տեսակի՝ վնասի չափի որոշման, որակի հետազոտությամբ, ապրանքի գնահատման հետազոտությամբ ենթատեսակների փորձաքննություններ կատարելու իրավասությամբ՝ որակավորման վկայականներ №243, №244, Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոի կողմից որակավորված, ԱՊՊԱ ոլորտում անշարժ գույքին և անշարժ գույքից բացի ցանկացած այլ գույքին պատճառված վնասներ գնահատող փորձագետ՝ որա-

կավորման վկայական №00196, ընդհանուր մասնագիտական և դատափորձագիտական աշխատանքի 25 տարվա ստաժով:

ՓՈՐՁԱԳԵՏԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՀԱՐՑ(ԵՐ)Ը.

Որքան է կազմում ՀՀ. Արմավիրի մարզ, համայնք Մեծամոր, ք. Մեծամոր 1-ին թաղ. 33-39 հասցեում, ավտոտնակի շուկայական արժեքը:

ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ(ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ) ՆՅՈՒԹԵՐԸ ԵՎ ԻՐԵՂԵՆ ԱՊԱՑՈՒՅՑ(ՆԵՐ)Ը ԿԱՄ ՀԵՏԱԶՈՏԵԼԻ ՕԲՅԵԿՏ(ՆԵՐ)Ը

Թիվ [redacted] կատարողական վարույթով 29.12.2025թ.–ի փորձագետ նշանակելու մասին որոշմանը, կից փորձաքննությանն է տրամադրվել.

1. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը N 05102022-04-0052

- ՀՀ. Արմավիրի մարզ, համայնք Մեծամոր, ք. Մեծամոր 1-ին թաղ. 33-39, ավտոտնակ :

ԳՈՐԾԻ ՀԱՄԱՌՈՏ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արմավիրի մարզային բաժին, [redacted] ուսումնասիրելով թիվ [redacted] կատարողական վարույթի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Տ

[redacted] կատարողական թերթի համաձայն համաձայն պետք է՝ [redacted] կատարել բռնագանձում:

Կատարողական գործողությունների ընթացքում առաջացել է հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման անհրաժեշտություն:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1 և 14-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Տ Թիվ [redacted] կատարողական վարույթով նշանակել փորձագետ, որի կատարումը հանձնարարել «Գլոբալ Սուրվեյ» դատական փորձագիտական ասոցիացիա ՍՊԸ-ին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ

1. ՀՀ տվյալ բնագավառում գործող նորմատիվ ակտերով սահմանված պահանջների համադրման և համեմատման մեթոդները:

- Շուկայի համակարգված դիտարկում /մոնիթորինգ/
- Տվյալ ոլորտի մասնագետների հետ համապատասխան տվյալների ձեռքբերում և վերլուծություն
- Գնահատման համեմատական, ծախսային և եկամտային մեթոդներ
- Փորձագետի սեփական տեղեկատվական շտեմարան
- Ի. Ֆրիդման, Ն. Օրդվեյ. «Եկամտաբեր անշարժ գույքի գնահատում և վերլուծություն»
- ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք
- ՀՀ քրեական օրենսգիրք
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
- ՀՀ հողային օրենսգիրք:
- Տեղեկատվական թերթերի և ամսագրերի, համապատասխան ինտերնետային կայքերի ուսումնասիրություն:

- Неверов А.Н, Чалых Т.И. “Товароведение и организация торговли непродовольственными товарами” М., 2003
- Теория и практика судебной экспертизы №1 (9) 2008г
- Теория и практика оценки", С.П. Коростелев, Маросейка, 2009

ԹՈՒՅԼԱՏՐՈՂ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐ

(Տվյալ եզրակացությունը կազմված է՝ հաշվի առնելով հետևյալ թույլատրող և սահմանափակող պայմանները)

Սույն եզրակացության առանձին մասերը չեն կարող մեկնաբանվել առանձին, այլ միայն ամբողջությամբ վերցված:

- Սույն եզրակացությունը հավաստի է միայն նրանում նշված նպատակների համար:
- Սույն եզրակացությունը կարող է օգտագործվել միայն ըստ նշանակության՝ համաձայն դատարանի որոշման:
- Սույն եզրակացության հետևությունները հիմնված են փորձաքննությունը նշանակելու մասին որոշմամբ առաջադրված ելակետային տվյալների և տրամադրված նյութերի հետազոտության վրա՝ առանց այդ տվյալների և նյութերի հավաստիությունն ու թույլատրելիությունը երաշխավորելու, քանզի նման գնահատումը բացառապես դատավարական օրենսդրությամբ սահմանված մարմինների լիազորությունների մեջ է:

ԱՊՐԱՆՔԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

2025թ. ապրիլի 08-ին «ԳԼՈԲԱԼ ՍՈՒՐՎԵՅ» ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ ՍՊԸ մասնագիտացված փորձագիտական հաստատության գրասենյակ է մուտքագրվել ՀԿԱԾ Արմավիրի մարզային բաժին, [redacted] որոշումը փորձագետ նշանակելու մասին:

Համաձայն հարկադիր կատարող [redacted] հետ նախորոք բանավոր համաձայնության՝ փորձագետները 2025թ. դեկտեմբերի 25-ին ժամը մոտ 17:00-ի սահմաններում իրականացրեցին այցելություն ՀՀ. Արմավիրի մարզ, համայնք Մեծամոր, ք. Մեծամոր 1-ին թաղ. 33-39 որտեղ կատարվել է վերոնշյալ հասցեում գտնվող՝ հետազոտմանն ենթակա օբյեկտի արտաքինից օրգանոլեպտիկ եղանակով զննման և լուսանկարման աշխատանքները:

Լուսանկարումը իրականացվել է «Samsung» մակնիշի Galaxy Z Fold 4 տիպի, SM-F936U մոդելի, 256 GB հիշողության քարտով, 1812×2176 էկրանի կետայնությամբ, 4MP +10MP մեգապիկսել դիմային և հիմնական 50MP +10MP +12MP մեգապիկսել կետայնությամբ թվային մակրոտեսա-լուսանկարչական խցիկով՝ կիրառելով Timestam p Camera ծրագիրը (տես սույն փորձաքննությանը կից լուսանկարչական հավելվածը):

Փորձագետին առաջադրված հարց(եր)ի վերաբերյալ ուսումնասիրությունները և հետազոտությունները կատարվել են սույն փորձաքննության նախաձեռնողի կողմից փորձագետի հետազոտմանը տրամադրված նյութերում առկա և ուսումնասիրմամբ ձեռք բերված տվյալների հիման վրա՝ կիրառելով տվյալների համեմատման և համադրման մեթոդները:

Փորձագետի հետազոտմանը տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց հետևյալը.

Հետազոտության առարկա անշարժ գույքը՝ ՀՀ. Արմավիրի մարզ, համայնք Մեծամոր, ք. Մեծամոր 1-ին թաղ. 33-39 , 04-003-0032-0035 կադաստրային ծածկագրով, 24.7 ք.մ մակերեսով ավտոտնակ: Փորձագետի կարծիքով, հետազոտվող անշարժ գույքը իր բնութագրերով համապատասխանում է արդի շուկայական պատկերացումներին:

Հետազոտվող հողամասի բնութագրական նկարագրությունը բերված է ստորև աղյուսակում.

Անշարժ գույքի հասցեն	ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Մեծամոր, ք. Մեծամոր 1-ին թաղ. 33-39 , ավտոտնակ
Նպատակային նշանակությունը	Բնակելի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը	Բնակելի կառուցապատման
Ընթացիկ օգտագործումը	Ավտոտնակ
Մակերեսը	24.7 քմ
Վկայականի համար	05102022-04-0052
Կադաստրային ծածկագիր	04-003-0032-0035-001
Գրանցված իրավունքի տեսակը	Սեփականություն
Գրանցված իրավունքի սուբյեկտները	
Տարածագնահատման գոտին	12
Հարկերի քանակ	1
Կառուցման նյութը	Տուֆ
Միջհարկային ծածկը	Երկաթբետոն
Տանիքը	Թիթեղ
Ներքին հարդարումը	Պատերը՝ սվաղած Հատակը՝ բետոնե Առաստաղը՝
Արտաքին հարդարումը	Առանց արտաքին հարդարում
Մուտքի դառպասը	Երկաթե
Ներքին հարդարման վիճակը	1 բալ
Հողամաս	
Նպատակային նշանակությունը	Բնակավայրերի
Գործառնական նշանակությունը	Բնակելի կառուցապատման
Կադաստրային ծածկագիր	04-003-0032-0035
Մակերեսը քմ	29 ք.մ

Հետազոտվող անշարժ գույքի տեղադրությունը

Ըստ՝ yandex.com/maps/116123/metsamor/?ll=44.118595%2C40.147369&mode=search&sll=44.118003%2C40.147378&text=40.147378%2C44.118003&z=18.74

Կադաստրային քարտեզի հատված գույքի նշումով



Շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը և անշարժ գույքի հարկը

Որոնել ըստ վկայականի համարի — 05102022-04-0052 — Փնտրել

Որոնել ըստ կադաստրային ծածկագրի

Հարցման ամսաթիվ	01/07/2026 15:12:25
Անշարժ գույքի հասցեն	Մարզ Արմավիր, համայնք Մեծամոր, քաղաք Մեծամոր. 1-ին թաղամաս 33-39 ավտոտնակ
Անշարժ գույքի տեսակը	Ավտոտնակ
Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (ՀՀ դրամ)	714 400.50
Անշարժ գույքի հարկը 2024 թ.-ի համար (ՀՀ դրամ)	714.40
Անշարժ գույքի հարկը 2025 թ.-ի համար (ՀՀ դրամ)	1 071.60
Անշարժ գույքի հարկը 2026 թ.-ի համար (ՀՀ դրամ)	1 428.80

Գնահատման մեթոդ(ներ)ի ընտրությունը

Հաշվի առնելով, որ գնահատվող գույքի հարակից տարածքներում ավտոտնակների շուկան ակտիվ է և առկա առաջարկի մասին տեղեկատվությունը, համադրելի ու բավարար է, գնահատումը կիրականացվի միայն համեմատական մեթոդի կիրառմամբ:

Անշարժ գույքի շուկայական արժեքի որոշում համեմատական մոտեցմամբ

Համեմատական մեթոդը հանդիսանում է առավել տարածված և կիրառվող գնահատման մեթոդում, քանի որ այն անմիջապես կապված է նմանատիպ օբյեկտների վաճառքների կամ առաջարկների գների հետ: Այս մեթոդով կիրառման դեպքում արժեքը որոշվում է գնահատվող օբյեկտը նույնական կամ համադրելի (նմանատիպ) օբյեկտների հետ համեմատելով, որոնց համար առկա է գների վերաբերյալ տեղեկատվություն:

Այս գնահատման շրջանակներում կախված առաջարկների ընտրության հնարավորությունից, գնահատողի կողմից list.am կայքից ընտրվել են 3 համադրելի ավտոտնակներ, որոնք գտնվում են գնահատվող գույքից, ուղիղ գծով առավելագույնը 350մ-500մ հեռավորության վրա : Համեմատվող ավտոտնակները ունեն նույն գույքային իրավունքներն ու սահմանափակումները, նպատակային և գործառնական նշանակությունը, շինության կառուցման նյութը, գոտիականությունը, կոմունալ հագեցվածությունը, տրանսպորտային մատչելիությունը և շրջակա միջավայրը: Համեմատվող

ավտոտնակների տվյալները տարբերվում են երկաթբետոնե միջհարկային ծածկի առկայությամբ, հորի առկայությամբ, ներքին հարդարման վիճակով: Շուկայական արժեքի վրա ազդող այլ գործոններ չեն բացահայտվել կամ համարվել են ոչ էական ազդեցություն ունեցող:

Անալոգը	Հղումը	Գույքի գտնվելու վայրը	Մակերեսը /քմ/	Առաջարկի արժեքը /ՀՀ դրամ/	Երկաթբետոնե միջհարկային ծածկի առկայությունը	Հորի առկայությունը	Ներքին հարդարումը
1	list.am/item/21853282	Մեծամոր 1-ին թաղ. 10 շ.	20	3 500 000	Առկա է	Առկա չէ	1
2	list.am/item/20547400	Մեծամոր 1-ին թաղ. 37 շ.	24	3 000 000	Առկա չէ	Առկա է	1
3	list.am/item/23660519	Մեծամոր 1-ին թաղ. 40 շ.	24	5 155 220	Առկա է	Առկա չէ	3

Գնահատվող և համեմատվող ավտոտնակների տեղադրությունը:



Ճշգրտման գործակցը հանդիսանում է, գնահատողի կողմից կատարված, շուկայական տեղեկատվության վերլուծության, մասնագետի կողմից այլ գնահատողների հետ կարծիքների փոխանակման արդյունքում ձևավորված և գնահատողի մասնագիտական փորձառությամբ կուտակվող՝ գիտելիքներով ձևավորված, մեծություն: Սակարկության և վաճառքի պայմանների զեղչը հաշվարկվել է 10%-ի չափով:

Անալոգը	Հղումը list.am/item-ից	Գույքի գտնվելու վայրը	Մակերեսը /քմ/	Առաջարկի արժեքը /ՀՀ դրամ/	1 քմ արժեքը /ՀՀ դրամ/ (առանց ճշգրտման)	Երկաթբետոնե միջհարկային ծածկի առկայության ճշգրտում (1.00 - առկա չէ , 0,85- առկա է)	Հորի առկայության ճշգրտում (1.00 - առկա չէ , 0,95-առկա է)	Ներքին հարդարման ճշգրտում (1.00 - 1 բալ, , 0,90-3 բալ)	Ճշգրտված 1 քմ արժեքը /ՀՀ դրամ/ (ներառյալ սակարկության –10 % զեղչը)
1	list.am/item/21853282	Մեծամոր 1-ին թաղ. 10 շ.	20	3 500 000	175 000	0,85	1,00	1,00	133 875
2	list.am/item/20547400	Մեծամոր 1-ին թաղ. 37 շ.	24	3 000 000	125 000	1,00	0,95	1,00	106 875
3	list.am/item/23660519	Մեծամոր 1-ին թաղ. 40 շ.	24	5 155 220	214 801	0,85	1,00	0,90	147 890
1 քմ համադրված միջին արժեքը									**129 547**

Գնահատվող հողամասի 1 քմ-ի համադրված միջին շուկայական արժեքը գնահատման ամսաթվի դրությամբ կկազմի 129 547 ՀՀ դրամ, իսկ 24.7քմ մակերեսով ավտոտնակի շուկայական արժեքը կկազմի 24.7 քմ X 129 547 ՀՀ դրամ = 3 199 806 ՀՀ դրամ ՝ ընդունվում է **3 200 000 (երեք միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ**:

Այսպիսով, ՀՀ Արմավիրի մարզ, համայնք Մեծամոր, ք. Մեծամոր 1-ին թաղ. 33-39 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05102022-04-0052 վկայական), հետազոտվող ավտոտնակի բացահայտված հավանական շուկայական արժեքը, առ 01.07.2026թ. դրությամբ, կազմել է՝ **3 200 000 (երեք միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ**:

Փորձագետ ՝ Ա.Լ.Ստեփանյան

Այսպիսով, վերլուծելով կատարված հետազոտությունները փորձագետ(ներ)ը եզրահանգեց(ին) հետևյալ հետևություն(ներ)ին.

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆ

Հարց.

Որքան է կազմում ՀՀ Արմավիրի մարզ, համայնք Մեծամոր, ք. Մեծամոր 1-ին թաղ. 33-39 , ավտոտնակի շուկայական արժեքը:

Պատասխան.

ՀՀ Արմավիրի մարզ, համայնք Մեծամոր, ք. Մեծամոր 1-ին թաղ. 33-39 հասցեի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05102022-04-0052 վկայական), հետազոտվող ավտոտնակի բացահայտված հավանական շուկայական արժեքը, առ 01.07.2026թ. դրությամբ, կազմել է՝ **3 200 000 (երեք միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ**:
Մանրամասն տես սույն եզրակացության «Ապրանքագիտական հետազոտություն» բաժնում:

Փորձագետ ՝ Ա.Լ.Ստեփանյան

Հետգրություն: Վերը բերված հետևությունները հիմնված են փորձաքննությունը կատարելու մասին որոշմամբ առաջադրված ելակետային փաստերի և տրամադրված նյութերի հետազոտության վրա՝ առանց այդ փաստերի և նյութերի հավաստիությունն ու թույլատրելիությունը երաշխավորելու, քանզի նման գնահատումը բացառապես դատավարական օրենսդրությամբ սահմանված մարմինների լիազորությունների մեջ է:

«ԳԼՈԲԱԼ ՍՈՒՐՎԵՅ» ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ ՍՊԸ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱ 1225-047 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ
ԸՆԴԱՄԵՆԸ 3 ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՎ

Լուսանկար N1.



Լուսանկար N2.



Լուսանկար N3.



Փորձագետ Ա.Լ.Ստեփանյան